*ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-274-25.05.2022-ԱռՀ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 33-րդ հոդվածը ~~ի 2-րդ մասում՝ 2-րդ մասը~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ***2.***1-ին մասով. ~~հետեւյալ խմբագրությամբ նոր նախադասությունով~~.

~~« Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացը իրականացնելու ժամանակահատվածում պահպանվում են բուժաշխատողի աշխատատեղը, ստաժը, ինչպես նաեւ վարձատրությունը » :~~

<<***2.***1 Շարունակական մասնագիտական զարգացման գործընթացն իրականացնելու՝ սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված նվազագույն անհրաժեշտ կրդիտների ապահովման ժամանակահատվածում պահպանվում են բուժաշխատողի՝ պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով սահմանված աշխատատեղը, ինչպես նաեւ հիմնական աշխատավարձը:>>:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~ 2023 թվականի հունվարի 1-ից: